Ծուշանիկ Կուրղինյան

Փողոցում

Ես նայում էի փողոց, իսկ ձյունը գալիս էր փաթիլ-փաթիլ . . .

Ձյան փաթիլները մի անուշ թախիծ են նետում ինձ ու ես անտրտունջ սկսում եմ խղճալ, ափսոսալ ինձ: Ես էլ փաթիլ էի, հստակ, կայտառ: Ինչո՞ւ ընկա վայր, գետնի վրա, ուր կանաչի ու ծաղկի հետ փոշի ու ցեխ էլ է լինում . . .

Ձյան փաթիլները ճնշում են ինձ ու մարում հույսերիս բոլոր կերոնները: Երբ ձյուն է գալիս, ինձ թվում է, թե էլ ոչ մի գարուն տեսնելու չեմ ես, էլ ոչ մի աստղ ժպտալու չէ ինձ, և կյանքս դառնալու է միօրինակ, տաղտկալի մի աննյութ պատմություն . . .

Այսպես ես նայում էի փողոց, իսկ ձյունը գալիս էր փաթիլ-փաթիլ: Բյուրավոր թեթև, փափլիկ փաթիլները վխտում էին օդում, անձայն, անշշուկ պարում, խաղում և դարսվում երկրի երեսին, ժպտում մաքուր, առողջ ու անբիծ ժպիտով: Այդ ժպիտը տարածվում էր պարզ երկնքի, ձյունածածկ երկրի վրա: Այդ ժպիտը ընկճում էր ինձ, լարում մտքերիս իրար ու դուրս թափված շեն քաղաքից: Սպառողներն էլ նույնպես: Սակայն պառավի բռնած դիրքը ավելի նախանձելի էր երևում. այս ու այն կողմ դրած տոպրակների մեջ նա թոռների հետ քարածուխի մանրուք էր հավաքում, փայտի կտորներ և ծվեններ:

Տա՛տ, այ տա՛տ, մի տես թե ինչ եմ գտել, վազում էր սրտատրոփ ոսկեհեր մանուկը: Բոլորը հտվաքվեցին տատի շուրջը և զարմացած դիտում էին գյուտը:

Տատիկ, ի՞նչ ասան է, մեջը ի՞նչ է եղել:

Պառավը նայեց փոշոտ գետնին, չոր մատներով ոլորեց իր «շան տոտիկը» և սիրով ծխելով դիտեց ամանն ու սկսեց:

Սա թիթեղյա ման է, հեռու աշխարհից փոքրիկ ձկներ են ստանում այս ամաններում յուղի մեջ կարգին շարված:

Ինչպիսի՞ ձկներ, տատ . . .

Փոքրիկ ձկներ, զավակս:

Տատ, համո՞վ են այդ ձկները: Օ՛, շատ համով. յուղն էլ հատուկ:

Դու կերե՞լ ես, տատ:

Ես . . . ճիշտն ասած կերել եմ . . .

Պատմի՛ր, պատմի՛ր:

Երբ ես աղախին էի, տերերս հաճախ ուտում էին այս ձկներից և ամանները խոհանոց տանելիս ես մնացածը ուտում էի, իսկ ամանները մաքրում ու պահում ինձ համար:

Ման գտնող երեխան տրտմեց, իսկ ամենափոքրիկը ձայնեց դժգոհ.

Իսկ ես քաղցած եմ, ուտել եմ ուզում:

Մի քիչ էլ որոնենք, տուն կգնանք. ճանապարհին անպատճառ հաց կգնեմ, համոզեց պառավը: Երեխաները դժկամ ցրվեցին՝ ամենն իր մտքում պատկերացնելով փոքրիկ համեղ ձկները հատուկ յուղի մեջ, թիթեղյա ամանում:

Տա՛տ, այ տա՛տ, մի նայի՛ր, կոշիկ գտա, ձայնեց մի փոքրիկ, և բոլորն էլ դարձյալ հավաքվեցին պառավի գլխին:

Տա՛տ, կրունկին նայիր, բարձր . ա՛խ, խորամանկներ, որպեսզի շուտ չմաշվի:

Չէ, հոգիս, տերերը չեն մաշում:

Ինչպե՞ս: Պատմի՛ր, տատ:

Ճիշտ եմ ասում. նրանք շարունակ հագուստներ, կոշիկներ գնում են, մի քանի անգամ հագնում և դեն շպրտում:

Դու ի՞նչ գիտես, տա՛տ:

Երբ ես աղախին էի տերերի մոտ՝ տեսա. վեր են կենում առավոտյան մի տեսակ են հագնվում, դուրս են գնում՝ մի ուրիշ տեսակ . երեկոյան ավելի շքեղ . և այսպես միշտ, ամեն օր . . .

Տա՛տ, տուն գնանք, ասաց փոքրիկ, վտիտ աղջիկը, քորելով կուրծքն ու փորը:

Ես վեր կացա ու խառնվեցի այդ փոքրիկ խմբին: Ամենքն էլ մաշված էին հողով, մարմնով, հագուստով, ամենքին էլ աղտն էր կրծել և հացի ահն ընկճել:

Տա՛տ, ասացի, ձորակն ապականված է ու նեխված, կթառամեն քնքույշ երեխաները, ինչպես ծաղիկները խորշակից . . . պարապիր մի այլ գործով: Ամռան տոթին դժվար Է թափառել աղբանոցում . . .

Անհոգ կաց, պատասխանեց պառավը, ողջը մեկ է ու ամեն տեղ Էլ աղբանոց, ի՞նչ կարող եմ անել ես: Կուշտ օրվա կարոտը կտրտում է սիրտս: Նայեցեք, որբեր են . մայրը մեռավ, հայրերն անհայտ են: Թաղում ծաղրն Է նեղում նրանց, իսկ այստեղ մենք ազատ ենք . . .

Երբ մտանք նրանց փողոցը, երեխաները բռնեցին պառավի փեշից, իսկ փողոցի տղաները շրջապատեցին նրանց և բարձր ձայնով սկսեցին երգել մի անկապ երգ, ուր հիշվում էր խեղճ որբերի անունն ու ծագումը և մոր մեղքերի շարանը:

Տեսնո՞ւմ ես, աղբանոցի խոզերն ու շները մարդու համար այդպիսի երգ չեն հորինել երբեք . . .

1904 թ . Ռոստով-Դոն